

ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԵՐԵՎԱՆ, 2009թ., ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՀՀ Սահմանադրության 39 հոդվածով կրթությունը հռչակված է որպես յուրաքանչյուր անձի հիմնական իրավունքներից մեկը: Այս համատեքստում կարևոր է բնակչության, հատկապես աշակերտների, էլեկտրոնային գրագիտության բարձրացումը և կրթական գործընթացի արդիականացումը՝ տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրման ու համատարած կիրառման ճանապարհով: ՀՀ կառավարության 2008 թ. ապրիլի 28-ի N 380-Ա որոշմամբ ընդունված ՀՀ կառավարության ծրագրում նշվում է.

- զարգացած երկրների հետ համադրելի կրթական համակարգ ունենալու տեսանկյունից միջոցներ կծեռնարկվեն ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և միջոցների կիրառման ոլորտների ընդլայնման, այդ ծառայությունների որակի բարելավման և մատչելիության ապահովման առումով, կկարևորվի էլեկտրոնային կրթության զարգացումը և համատարած կիրառումը, կներդրվեն ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման և հեռավար ուսուցման համակարգեր (4.4.3. Կրթությունը և գիտությունը),

- Կառավարությունը հետամուտ կլինի, որ մինչև 2012 թվականը Հայաստանի բոլոր դպրոցներն ապահովված լինեն բավարար քանակությամբ համակարգչային սարքավորումներով և դրանց գերակշիռ մասն ընդգրկված լինի դպրոցական միասնական համացանցում (4.4.3. Կրթությունը և գիտությունը):

Ժամանակակից տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների և ուսուցման նոր մեթոդների օգտագործումը կարևորվում է նաև ՀՀ Կառավարության 2004թ. մայիսի 27-ի որոշմամբ ընդունված Հանրակրթության պետական կրթակարգում և «ՀՀ կրթության զարգացման 2008-2015թթ. պետական ծրագրի» նախագծում:

ՀՀ կառավարության 2008 թ. հոկտեմբերի 30-ի N 1207 որոշմամբ ընդունված «Կայուն զարգացման ծրագրի» կրթության ոլորտի

գերակայություններին, նպատակադրումներին և առաջնահերթություններին նվիրված բաժնուն նշվում է.

- 647. Քայլեր են ձեռնարկվելու հեռահար ուսուցման համակարգի ներդրման և դպրոցների էլեկտրոնային ցանցի ընդլայնման ուղղությամբ՝ նպատակ հետապնդելով 2012թ. ապահովել բոլոր հանրակրթական դպրոցների ընդգրկվածությունը հեռահար ուսուցման համակարգում: Դա, իր հերթին, ենթադրում է հեռահաղորդակցության ու տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում և զարգացում:

- 648. Դպրոցի բարեփոխման պահանջներից ելնելով՝ ծրագրի շրջանակներում առաջնահերթ է նաև ուսուցիչների (հատկապես՝ ավագ դպրոցի) շարունակական վերապատրաստումը, նրանց որակավորման բարձրացման չափորոշիչների համապատասխանեցումը կրթական նոր ծրագրերին ... :

- 649. Հանրակրթության որակի բարձրացման և ավագ դպրոցի առաքելությունն ապահովելու համար առաջնահերթություններից է դպրոցների նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազայի համալրումը, նորագույն տեխնոլոգիաների ներդրումը (լաբորատոր սարքավորումներ, համակարգչային տեխնիկա, ինտերնետ և այլն):

Վերը նախանշված խնդիրների լուծման ուղղությամբ Հայաստանի հանրակրթության ոլորտում վերջին տարիների ընթացքում բավականաչափ աշխատանքներ են կատարվել ՏՀՏ ներդրման համար: Ստորև ներկայացվում են դրանցից մի քանիսն ըստ ուղղությունների:

Դպրոցների համակարգչային հագեցվածություն

Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում 2005-2006թթ. Հայաստանի 589 դպրոցներում տեղադրվել են 2988, իսկ 2007 թվականին 340 դպրոցներում՝ 1296 համակարգիչներ: 2008 թվականի ընթացքում 362 դպրոցներ ստացել են 1133 համակարգիչներ: 2009թ. սեպտեմբերին, վարկային ծրագրի շրջանակներում, սկսվել են դպրոցներում անվճար հիմունքներով 700 համակարգիչների տեղադրման աշխատանքները: Այս համակարգիչների հաշվառումով Հայաստանի հանրակրթության ոլորտում դպրոցական մեկ համակարգչին համապատասխանող աշակերտների միջին քանակը ներկայումս շուրջ 35 է:

Դպրոցների ընդգրկում միասնական ցանցում և ինտերնետային կապի ապահովում

Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում (ՀԴԻՑ) ընդգրկված դպրոցներին տրամադրվում է շուրջօրյա ինտերնետային կապ: Դպրոցական ցանցում հնարավորինս արգելափակվում է բռնություն, սեռական սանձարձակություն պարունակող տեղեկատվությունը, իրականացվում է հակավիրուսային պաշտպանություն: ՀԴԻՑ-ի բոլոր դպրոցները mail.schools.am միջավայրում ունեն իրենց էլեկտրոնային փոստի հասցեները, իսկ դրանցից 247-ը շահագործում են ցանցի կենտրոնական հանգույցում տեղադրված դպրոցական վեբ-կայքերը:

ՀԴԻՑ-ի կենտրոնական հանգույցը տեղադրված է Կրթական տխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) տարածքում: Այն Հայաստանի չորս առաջատար ինտերնետ-մատակարարների (Արմենտել, Արմինկո, Վեբ, Էյ-Դի-Սի) օպտիկական մալուխներով համակցված սերվերերային և ցանցային սարքավորումների ամբողջություն է:

Ներկայումս ՀԴԻՑ-ն ընդգրկում է 644 դպրոցներ (Հայաստանի բոլոր դպրոցների շուրջ 44 տոկոսը):

2008թ. ստեղծվել է Շարժական ինտերնետային համակարգչային կայանը (ՇԻՀԿ), որը տասներկուօրյա համակարգչային դասընթացներ է իրականացնում Հայաստանի հեռավոր բնակավայրերի աշակերտների և

ուսուցիչների համար: ՇԻՂԿ-ի աշխատանքի շնորհիվ էապես մեծանում է ՀԴԻՑ-ի ընդգրկումը:

Կրթության ոլորտում ՏՀՏ ներդրմանը նպաստող ուսումնաօժանդակ ձեռնարկներ և էլեկտրոնային ուսումնական ձեռնարկներ

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի (ԲՀԻ ՕՀ) հայաստանյան մասնաճյուղի օժանդակությամբ 2003-2007 թվականների ընթացքում Երևանի պետական համալսարանում ստեղծվել են 14 էլեկտրոնային ուսումնական ձեռնարկներ, որոնք Կրթության ազգային ինստիտուտը երաշխավորել է որպես ուսումնաօժանդակ ձեռնարկներ կամ լրացուցիչ ուսումնական նյութեր հանրակրթական դպրոցների համար: Այս ձեռնարկները ԿՏԱԿ-ի կողմից լրամշակվել, բազմացվել և տեղադրվել են Հայաստանի բոլոր դպրոցներում:

«Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում ստեղծվել են «Հայոց լեզվի և քերականություն 7-9 դասարանների համար» ուսուցողական համակարգչային խաղը և «Հանրահաշիվ և երկրաչափություն 7-9-րդ դասարանների համար» ուսուցողական համակարգչային ծրագիրը: Ընթացքի մեջ են նաև նմանատիպ ևս 2 ուսուցողական համակարգչային ծրագրերի ստեղծման աշխատանքները վարկային ծրագրի միջոցներով:

ՀՀ 2009թ. պետական բյուջեով նախատեսված է մշակել ՏՀՏ օգտագործման վերաբերյալ երկու նոր ուսումնաօժանդակ ձեռնարկներ և կից էլեկտրոնային նյութեր ու դրանք անվճար տարածել դպրոցներում: Օգոստոս ամսին հայտարարվել է բաց մրցույթ՝ «Ինտերնետի օգտագործման ուղեցույցի» ստեղծման համար:

Կրթական պորտալ

Շահագործվում է «Կրթական համալիր էջ» ինտերնետային պորտալը (www.armedu.am)՝ ստեղծվել է կրթական-տեղեկատվական միջավայր, կազմակերպվել են առցանց կրթական միջոցառումներ (մրցույթներ, օլիմպիադաներ, գիտաժողովներ, քննարկումներ, հարցումներ և այլն):

Պորտալը էլեկտրոնային բովանդակության համահայկական երրորդ մրցույթում ճանաչվել է 8 լավագույններից մեկը՝ արժանացել գլխավոր մրցանակի ու դրամական պարգևի, «Էլեկտրոնային ուսուցում անվանակարգում» դարձել հաղթող, մասնակցել միջազգային մրցույթի:

Պորտալի սերվերները տեղադրված են ԿՏԱԿ-ի կենտրոնական հանգույցում:

Ուսուցիչների վերապատրաստում

2004-2009թթ. «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում համակարգչային գրագիտության ուղղությամբ վերապատրաստվել են ինֆորմատիկայի և այլ առարկաների շուրջ տասը հազար ուսուցիչներ:

ԴՅ 2009թ. պետական բյուջեով նախատեսված է վերապատրաստել ԶԴԻՑ-ին նոր միացված 320 դպրոցների ինֆորմատիկայի ուսուցիչներին և դպրոցների ներքին ցանցերն ու համակարգչային ուսումնական կենտրոնները սպասարկող մասնագետներին: Վերջիններիս վերապատրաստման դասընթացները կազմակերպելու համար սեպտեմբեր ամսին հայտարարվել է բաց մրցույթ:

Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ

Կրթության կառավարման տեղեկատվական համակարգը (ԿԿՏՀ) ստեղծվել և գործում էր «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ում, որն առայժմ ներառում է հանրակրթության ոլորտին առնչվող վիճակագրական տվյալների շտեմարանը:

ԴՅ կառավարության 2008թ. մայիսի 22-ի հ. 485-Ն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 11-ի հ. 408-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշմանը համապատասխան ԿՏԱԿ-ի կառուցվածքում կատարվել է փոփոխություն՝ ստեղծվել է «Կրթության տեղեկատվավերլուծական ծառայություն» բաժինը, որի հիմնական

գործառույթը կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ձևավորումն ու գործունեության ապահովումն է:

Կառավարության վերոհիշյալ որոշումով ԿՏԱԿ-ին է վերապահվել նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունների վիճակագրական տեղեկատվության պահպանման, վերլուծման և տարածման գործընթացների ապահովումը, տեղեկատվության միասնական հիմնապաշարի (բազա) ստեղծումը:

2009թ. ընթացքում ԿՏԱԿ-ում իրականացվել են աշխատանքներ Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿԿՏՀ) գործունեության և զարգացման ուղղությամբ՝ ամփոփվել և ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն են ներկայացվել հանրակրթության 2008-2009 ուսումնական տարվա վիճակագրական տվյալները, տպագրվել է «Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» հաշվետվային ձևը 2009-2010 ուսումնական տարվա համար, նախապատրաստվել և հրատարակման է հանձնվել «Հանրակրթությունը Հայաստանում» տարեկան տեղեկագիրը, իրականացվում է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի (ՅՈՒՆԻՍԵՖ) «Նախադպրոցական կրթության տեղեկատվական համակարգի տեխնիկական առաջադրանքի մշակում» դրամաշնորհային ծրագիրը, կատարվել են նախապատրաստական աշխատանքներ մասնագիտական կրթության տեղեկատվական համակարգի ստեղծման ուղղությամբ:

Համակարգչային ծրագրերի արտոնագրում

Կրթության ոլորտում օգտագործվող «Մայքրոսոֆթ» ընկերության համակարգչային ծրագրերի արտոնագրման նպատակով 2008թ. ԿՏԱԿ-ը պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին գնել և 2009թ. ընթացքում բոլոր կրթական հաստատություններում տեղադրել է արտոնագրերի փաթեթը, որը մասնավորապես ընդգրկում է 8300-ական Windows Vista և Microsoft Office:

Տարբեր կազմակերպություններում ստեղծված կրթական համակարգերի ու ծրագրերի ներդրում հանրակրթության ոլորտում

2008թ. օգոստոսի 24-ին ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որը պետք է իրականացնի Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում ակադեմիկոս Ա.Քուչուկյանի ղեկավարությամբ մշակված «ՈՒսում» համակարգի (համակարգը աշակերտներին և ուսուցիչներին ինքնուսուցման, ինքնաստուգման, ինչպես նաև համակարգչային գիտելիքների ստուգման (թեստավորման) հնարավորություն է ընձեռում) և «Քվանտ» վարժարանի «ՏՀՏ-ն դպրոցում» ծրագրի (դպրոցի ուսումնական և տնտեսական գործունեությունը կառավարող ծրագրեր) փորձնական ներդրումը հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներից հետո («ՈՒսում» համակարգի փորձաքննություն և համապատասխանեցում եվրոպական չափանիշներին, «ՏՀՏ-ն դպրոցում» ծրագրի ուսումնասիրություն և այլն) առաջիկա ամիսների ընթացքում «ՈՒսում» համակարգն ու դպրոցի տնտեսական և ուսումնական գործունեությունը կարգավորող համակարգչային ծրագրերը կներդրվեն ուսումնասիրությունների համար ընտրված դպրոցներում, կսկսվեն դրանց շահագործման աշխատանքները: Հընթացս կուսումնասիրվեն համակարգի ու ծրագրերի առանձնահատկությունները, Հայաստանի բոլոր դպրոցներում դրանց ներդրման հնարավորությունները: Աշխատանքային խմբի գործունեության շրջանակներում կքննարկվի նաև դպրոցներում «Լոգո» համակարգչային միջավայրի ներդրման նպատակահարմարությունը:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իրավիճակի վերը տրված նկարագրությունից կարելի է կատարել հետևյալ վերլուծությունը.

- Համակարգիչների նվազագույն անհրաժեշտ քանակով ապահովված դպրոցները կազմում են ընդհանուր քանակի ընդամենը 57%-ը: Մեկ համակարգչին համապատասխանող աշակերտների քանակը (1/35) դեռևս հեռու է միջին Եվրոպական ցուցանիշից (1/20):

- ՀԴԻՑ-ում ընդգրկված է Հայաստանի դպրոցների միայն 44%-ը: Շուրջ հինգ տարի շահագործվող ցանցային սարքավորումների զգալի մասը բարոյապես և ֆիզիկապես մաշված ու հնացած է:

- «Կրթական համալիր էջ» պորտալի 2008-2009 թվականների ընթացքում ստեղծված բովանդակային պաշարները դեռևս բավարար չեն պորտալի այցելուների՝ հասարակության լայն շերտերի ներկայացուցիչների կրթական ու մշակութային պահանջները բավարարելու համար, լիարժեք չի գործում հեռավար ուսուցման համակարգը, դեռևս ամբողջությամբ ձևավորված չէ շահագործող անձնակազմը՝ պորտալի լիարժեք բովանդակային ու տեխնիկական շուրջօրյա սպասարկումն ապահովելու տեսանկյունից:

- Խիստ անբավարար են ուսումնական գործընթացում կիրառվող էլեկտրոնային ձեռնարկները, ՏՀՏ ներդրման կիրառմանը նվիրված օժանդակ և մեթոդական նյութերը:

- Ուսուցիչները, այդ թվում նաև ինֆորմատիկայի ուսուցիչների մի մասը, դեռևս ոչ լիարժեք են տիրապետում ժամանակակից ՏՀՏ միջոցներին և դասապրոցեսում դրանց կիրառման մեթոդներին, դպրոցների համակարգչային ուսումնական կենտրոններն և ներքին ցանցերը սպասարկող մասնագետներից

շատերի գիտելիքներն ու փորձը չեն բավարարում օրեցօր բարդացող խնդիրները լուծելու համար:

- Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում դեռևս ընդգրկված չեն մանկապարտեզներն ու մասնագիտական ուսումնական հաստատությունները: Չի գործում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության (տվյալների փոխանակության) համակարգը, տվյալների (փաստաթղթերի) փոխանակման գերակշիռ մասն իրականացվում է թղթային տարբերակով (լավագույն դեպքում՝ էլեկտրոնային կրիչներով)՝ առանց ՀԴԻՑ-ի ընձեռած հնարավորությունների օգտագործման, հավաքված տվյալները բավարար չափով չեն օգտագործվում վերլուծություններ կատարելու և կառավարչական որոշումներ ընդունելու համար: Ուսումնական հաստատություններում ներդրված չեն ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման համակարգեր, վիճակագրական գործող փաստաթղթերում արտացոլված չեն կրթության գործընթացի անմիջական մասնակիցների՝ սովորողների և ուսուցիչների անհատական տվյալները:

- Հայաստանի կրթության ոլորտում օգտագործվող ոչ բոլոր համակարգչային ծրագրերն ունեն համապատասխան արտոնագրեր:

- Հայաստանի կրթության ոլորտում ՏՀՏ ծրագրեր են իրականացնում բազմաթիվ պետական, ոչ պետական, հասարակական, միջազգային կազմակերպություններ ու անհատներ, որոնց գործողություններն ու ջանքերը բավարար չափով արդյունավետ չեն՝ համակարգված չլինելու պատճառով:

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ

Հայաստանի հանրակրթության ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների լիարժեք ներդրման տեսանկյունից արդիական է հետևյալ խնդիրների լուծումը.

1. Հայաստանի դպրոցների համալրում համակարգչային սարքավորումներով՝ մեկ համակարգիչ/քսան աշակերտ ցուցանիշի ապահովում, ֆիզիկապես և բարոյապես մաշված համակարգիչների փոխարինում նորերով:
2. Հայաստանի բոլոր դպրոցների ընդգրկում ՀԴԻՑ-ում, ցանցային սարքավորումների նորացում, ՀԴԻՑ-ի անխափան սպասարկում և շարժական ինտերնետային-համակարգչային կայանի շահագործում:
3. «Կրթական համալիր էջ» պորտալի շահագործում (պաշարների ու բովանդակային պարունակության համալրում, կրթական առցանց միջոցառումների կազմակերպում, հեռավար ուսուցման համակարգի գործարկում):
4. Ուսուցիչների համակարգչային գրագիտության մակարդակի բարձրացում, ինֆորմատիկայի ուսուցիչների և դպրոցների ներքին ցանցերն ու համակարգչային ուսումնական կենտրոնները սպասարկող մասնագետների վերապատրաստում:
5. Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի գործունեության ապահովում և վերջնական ձևավորում: Ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգերի մշակում և ներդրում:

6. Կրթության էլեկտրոնային բովանդակության մշակում, էլեկտրոնային դասագրքերի, ուսումնասօժանդակ ձեռնարկների ստեղծում:

7. Կրթական համակարգում օգտագործվող համակարգչային ծրագրերի արտոնագրման գործընթացի շարունակականության ապահովում:

8. Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների բնագավառի ծրագրեր իրականացնող կազմակերպությունների ծրագրերի համակարգում: